


Հեպտենոֆոս (Խոստակվիկ)



Քիմիական անունը՝ հեպտենոֆոս

Այլ անուններ՝ 7-քլորոբիցիկլո[3.2.0]հեպտա-2,6-դիեն-6-իլ դիմեթիլ ֆոսֆատ
4-(O,O-դիմեթիլֆոսֆորիլ)-5-քլորոբիցիկլո (3,2,0)հեպտա-1,4-դիենե,
հեպտենոֆոս

Միացությունը՝ C₉H₁₂ClO₄P

Գրանցման համարը (ըստ Քիմիկատների մասին տեղեկատվական ծառայության)
(CAS)՝ 23560-59-0

Թունաքիմիկատի տեսակը՝ միջատասպան (ինսեկտիցիդ), ակարիցիդ

Բնութագիրը

Հեպտենոֆոսը բաց դարչնագույն հեղուկ վիճակով թունաքիմիկատ է: Կիրառության մեջ է դրվել 1975 թ.-ից: Պատկանում է ֆոսֆորօրգանական միացությունների խմբին: Կոնտակտային և համակարգային թունաքիմիկատ է: Համարվում է ացետիլխոլինէստերազայի արգելակիչ (ինհիբիտոր):

Օգտագործումը

Մեծ մասամբ օգտագործվում է ծծող միջատների և որոշ երկթևանիների վերահսկման համար: Առևտրային անվանումներից են՝ HOE2982, Խոստակվիկ, Ռագադան:

Հնարավոր վտանգները և կարգավորումը

Ներառված է Պեստիցիդների դեմ գործողությունների ցանցի (PAN) <<բացասաբար ազդող>> քիմիկատների ցանկում: Որպես ակտիվ նյութ ներառված չէ Եվրամիության 91/414/EEC հրահանգի հավելված 1-ում:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գնահատման, թունաքիմիկատը պատկանում է I բ դասին, այսինքն, խիստ վտանգավոր է:

Թունայնությունը

Խիստ թունավոր է կաթնասունների մեծ մասի և այլ կենդանիների համար:

Թունայնությունը մարդկանց համար

Թունավորման ախտանիշներից են՝ չափից ավել թթարտադրությունը, քրտնարտադրությունը, արցունքակալումը, մկանային ջղաձգությունը, թուլությունը, դողերոցքը, գլխացավը, գլխապտույտը, սրտխառնոցը, փսխումը, լուծը, դժվար շնչառությունը, թոքերում ջուր հավաքվելը, ծանր դեպքերում՝ նոպաները, անմիզապահությունը, գիտակցության կորուստը:

Օրգանիզմի համար օրական թույլատրելի չափաբաժինը (ADI) 0,003 մգ/կգ է:

Սուր թունայնության սահմանային քանակությունները

Առնետների մոտ օրալ ճանապարհով սուր թունավորում առաջանում է, երբ LD50-ը 96 մգ/կգ է, մաշկի հետ շփման միջոցով, երբ LD50-ը 2000 մգ/կգ-ից ավել է, իսկ ներս շնչելու դեպքում, երբ LC50-ը 0,95 մգ/լ է:

Քրոնիկ թունայնությունը

Առնետների վրա կատարված երկամյա հետազոտությունը ցույց է տվել, որ 15 մգ/կգ -ն այն մակարդակն է, որի դեպքում չեն հայտնաբերվում բացասական հետևանքներ:

Ազդեցությունը վերարտադրողական համակարգի վրա

Բացասական հետևանքներ չեն գրանցվել:

Բնապահպանական հետևանքները

Հեպտենոֆոսը խիստ թունավոր է թռչունների համար (սուր, LD50-ը՝ 17 մգ/կգ): Շատ թունավոր է ձկների (սուր, 96 ժամ, LD50-ը՝ 0,056 մգ/լ) և ջրային անողնաշարավորների համար (սուր, 48 ժամ, EC50-ը՝ 0,0022 մգ/լ): Քիչ թունավոր է ջրիմուռների (սուր, 72 ժամ, EC50-ը՝ 35 մգ/լ) և չափավոր թունավոր է անձրևաորդերի համար (սուր, 14 օր, LC50-ը՝ 98 մգ/լ):

Քաղցկեղածին հատկությունը

Քաղցկեղածին չէ:

Մուտագենեզ: Տվյալներ չկան:

Բիոակումուլյացիա: Բիոակումուլյացիայի ներուժը ցածր է:

Տեղափոխվելու հատկությունը: Միգրացիա կատարելու ներուժը չափավոր է:

Շրջակա միջավայրում կայունությունը և քայքայվելու հատկությունը

Հեպտենոֆոսը կայուն չէ, հողում կիսատրոհման սևողությունը (DT50) 1,4 օր է (կարող է տևել 0,07 - 1,8 օր): Ջրային միջավայրում DT50 –ի միջին սևողությունը 13 օր է: Ալկալահանման ներուժը փոքր է:

Սահմանային քանակությունները

Բոլոր մշակաբույսերի համար 0,05 մգ/կգ է:

Վտանգավորության նշանը՝ T (թունավոր է)

N (վտանգավոր է շրջակա միջավայրի համար)

Ռիսկերը

Վտանգավոր է՝ կուլ տալու դեպքում:

Շատ թունավոր է ջրային օրգանիզմների համար:

Ջրային միջավայրում կարող է առաջացնել երկարատև բացասական հետևանքներ:

Խորհուրդներ՝ անվտանգության ապահովման նկատառումներով

Պահեք փակի տակ և երեխաների համար անհասանելի տեղում:

Խուսափեք գազը, ծուխը, գոլորշին, ջրային փոշին շնչելուց (սա պետք է մանրամասնի արտադրողը):

Մաշկի վրա թափվելու դեպքում, մաշկը լվացեք առատ ... (թե ինչով, պետք է մանրամասնի արտադրողը):

Հազեք հարմար ձեռնոցներ:

Վատ ինքնազգացողության դեպքում, անմիջապես դիմեք բժշկի օգնությանը (հնարավորության դեպքում, ցույց տվեք պիտակը):

Թունաքիմիկատի և վերջինիս տարայի հետ վարվեք որպես վտանգավոր թափոնի:

Խուսափեք թունաքիմիկատով շրջակա միջավայրի աղտոտումից: Ղեկավարվեք անվտանգության ապահովման հատուկ հրահանգներով:

Հղումներ՝

<http://sitem.herts.ac.uk/aeru/footprint/en/Reports/379.htm>

<http://www.mpo.cz/cz/prumysl-a-stavebnictvi/dance/vypis723.html>

http://www.pesticideinfo.org/Detail_Chemical.jsp?Rec_Id=PC37684

<http://www.croplife.co.za/docs/MRL%27s.pdf>



Տեղեկատվությունը թարգմանվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Սույնի բովանդակությունը պատկանում է Արմիկա ասոցիացիային և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ին և չի կարող դիտվել որպես Եվրամիության դիրքորոշման արտացոլում: